

961

Պարկետարներ բոլոր յերկիրքների, միացյել

Վ. Մ. ՄՈՒՆՏՈՎ

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն
Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
Մ Ե Զ Մ Տ Ց Վ Ո Ղ
Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր Ի
Մ Ա Ս Ի Ն

342(47)

Մ - 86

Տ Ե Ր Ե Վ Ա Ն
1 9 3 5

349 (476)

Ա-86

01 MAR 2010

Թիվային համար պահպանի գործությունների միացելի

05 FEB 2007

Հ. Մ. ՄՈՒՆՈՒԿ

ԽՈՐՀՈՂԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԵԶ ՄՏՑՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ԽՈՐՀՈՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ VII ՀԱՄԱ-
ԳՈՒՄԱՐՈՒՄ 1935 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ

392-6/1008
35033

961
1968



104 .07. 2013

34767

34767

Թարգմ. Հ. Թուլջյան
Պատ. Խմբ. Պ. Աղեյյան
Սրբազրիչ Գ. Վասկանյան



Գլուխի լիազոր № ս-32
Հրատ. № 274, պատվեր № 111
Տիրաժ 5000, ինդեքս Ա-17



Կուսական/սպառան
Յերևան Ալավերդյան № 27.

I. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԴԱՍԱԿՐԴԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՀՄ-ՈՒՄ

4819-91

В. М. МОЛОТОВ
ОБ ИЗМЕНЕНИЯХ
В СОВЕТСКОЙ
КОНСТИТУЦИИ

Доклад на VII Съезде Советов 6 февраля 1935 г.

Партиздан · 1935 · Эривань

Խորհրդային սահմանադրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու հարցն այս համագումարում դրված ե Համամիութենական Կումունիստական (բոլշևիկների) Կուսակցության կենտրոնական Կոմիտեյի առաջարկով։ Կենտրոնական Կոմիտեյում այդ հարցը դրվել ե ընկեր Ստալինի նախաձեռնությամբ։ (Ծափեր)։

Ի՞նչու յե դրված մեր սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու հարցը։ Առաջին, նրա համար, վոր 1918 թվից ի վեր, յերբ Լենինի կողմից դրվեցին խորհրդային սահմանադրության հիմունքները, արմատապես փոխվել ե դասակարգային ուժերի փոխարարերությունը մեր յերկրում, հատկապես հանրային սեփականության սկզբունքների հաղթությունից հետո ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում։ Յեզ յերկրորդ, նրա համար, վոր հասել ե ժամանակը, յերբ մենք կարող ենք մինչև վերջը ծավալել խորհրդային դեմոկրատիզմը և դրան համապատասխան փոփոխու-

թյուններ մտցնել մեր ընտրական սիստեմի մեջ։ Յերկրի արդի գրությունը, ինչպես նրա սոցիալ-տնտեսական ստրուկտուրայի տեսակետից, այնպես ել աշխատավոր մասսաների կուլտուրա-քաղաքական գիտականության տեսակետից, անհամեմատելի յև 1923 թվականի հետ, յերբ ընկեր Ստալինի հանձնաժողովը ձևակերպեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրությունը։

Վերցնենք Խորհրդային հանրապետության հիմնական որենքը (սահմանադրությունը) գրելու ժամանակը, այսինքն 1918 թվականը։

Այն ժամանակ, 1918 թվականին, մեր յերկիրը գտնվում եր տնտեսական փլուզումի ծանր պայմաններում և, համաշխարհային իմպերիալիստական սպանդանոցից հաղիս ազատված՝ պետք ե թևակումեր քաղաքացիական կռիվների յերկարատև գդղարին ժամանակաշրջանը։ Այն ժամանակ գործարաններն ու ֆաբրիկաները դեռ չեյին վերցված ֆաբրիկատերերից ու գործարանատերերից, այլ միայն գործարաններին բանվորական կազմակերպությունների ու խորհրդային իշխանության որգանների վերահսկողության տակ եյին առնված։ Թե վորքան թույլ եյինք մենք տնտեսական բնագավառում, յերկում և այն բանից, վոր այն ժամանակ յերկրի տնտեսության նշանակալից մասի պետական կապիտալիզմի ուկրերի վրա՝ անցումը կուսակցությունը համարում եր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման արագ նախապետաստող ամենացանկալի նախադրյաներից մեկը։ Այն ժամանակ մեր արդյունաբերությունն անկաման մեջ եր գտնվում, իսկ գյուղատնտեսությունը,

չնչին բացառությամբ, մանր գյուղացիական տընտեսություններից եր բաղկացած, և գյուղում մեծ դեր եր խաղում կուլակությունը։ Հողն արգեն ըռնազրավված եր կալվածատերերից և պետական սեփականություն եր հայտարարված, բայց գյուղացիները դեռ վոչ մի պատկերացում չունեյին սոցիալիստական տնտեսության մասին։ Կոլտնտեսություններ կային միայն մի քանի վայրերում և այն ել միավորներով։ Բանվոր դասակարգը, Հոկտեմբերյան որերին իր հերոսությամբ ապահովելով հաղթանակը բուրժիայի նկատմամբ և հողի, խաղաղության ու ազատության համար մղվող պայքարում համախմբելով Խորհրդային իշխանության շուրջը քաղաքի և գյուղի լայն մասսաներին, սաստկապես քայքայվել եր վլուզումից ու պատերազմից։ Կարմիր բանակը մենք դեռ նոր եյինք սկսում ստեղծելու Բոլշևիկների կուսակցությունը փօրդիկ մեծություն եր կազմակերպությունը բանվարդիք մեջ և բոլորովին անշան մաս՝ աշխատավորության ամբողջ մասսայի համեմատությամբ։ Մեկ տարուց մի քիչ ավելի յեր անցել այն մոմենտից, 1917 թվի մարտից, յերբ մեր կուսակցությունն առնասարակ բացահայտ, լեգալ կուսակցությունն եր դարձել։

Ահա թե ի՞նչպիսի մոմենտում լենինի կողմից գըրվեց խորհրդային սահմանադրությունը։

1918 թվի վերջերին լենինը գրում եր. «Խորհրդություններն առաջացան առանց վորեե սահմանադրության և տարուց ավելի (1917 թվի գարնանից մինչև 1918 թվի ամառը) ապրում եյին առանց վորեե սահմանադրության»։ 1917 թվի հունիսին տեղի ունեցավ Խորհրդիների առաջին համառուսական համագումարը։ 1917 թվի հոկտեմբերին իշխանությունն արգեն ամ-

բողջությամբ անցավ խորհուրդներին։ Մակայն միշտայն 1918 թ. հուլիսի 10-ին Խորհուրդների համառուսական Վ համագումարն ընդունեց Խորհրդային հանրապետության սահմանադրությունը (Հիմնական որենքը)։

Այդ սահմանադրությունը չեր կարող այլ բան անել, քան ամրապնդել Խորհրդային իշխանության այդ ժամանակին ստեղծված հիմունքները և նշել դեպի սոցիալիզմ տանող Խորհուրդների յերկրի հետագա զարգացման ընդհանուր հեռանկարը։

Ահա մի քանի հիմնական կետեր այդ սահմանադրությունից, վորի ներածական մասը «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան» ե՝ կազմած Լենինի կողմից 1918 թ. հենց սկզբին։

Այդ «Դեկլարացիայի» առաջին կետում ասված ե. «Ռուսաստանը հայտարարվում ե բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների հանրապետություն։ Ամեռոջ իշխանությունը թե կենտրոնում, և թե տեղերում պատկանում ե այդ խորհուրդներին»։ Այնուհետև ազդարարվում ե, վոր խորհրդային հանրապետության հիմնական խընդիրն և «վոչչացնել մարդու ամեն մի շահագործում մարդու միջոցով, լիսակատար կերպով վերացնել հասարակության բաժանումը դասակարգերի, շահագործողների դիմադրության անխնա ձնշումը, հասարակության սոցիալիստական կազմակերպության հաստատումը և սոցիալիզմի հաղթությունը բոլոր յերկիրներում»։ Ապա, քանի վոր համաշխարհային իմպերիալիստական պատերազմն այդ ժամանակ դեռ չեր վերջացել արտահայտվում ե «անհողողդ վճռականու

թյուն մարդկությանը կորզել ֆինանսական կապիտալիզմի և խմբերի հիգմի ճիրաններից, վորոնք յերկիրն արյունով լցրին ներկա բոլոր պատերազմներից ամենավոճարվործ պատերազմում»։ Այնուհետև խորհրդային սահմանադրությունը հաստատապես հայտարարում ե գաղութներ ու փոքր յերկիրներ գրավելու բուրժուականությունից լրովին խզվելու և ցեղային ու ազգային պատկանելիության հետ կապված ամեն տեսակի սահմանափակումները վերացնելու մասին, և ազդարարվում ե, վոր «այժմ իրեն շահագործողների դեմ վարած պրոլետարիատի վճռական մարտի մոմենտին շահագործողները չեն կարող տեղ ունենալ իշխանության և վահագործում»։ Մեր սահմանադրության մեջ առանձնապես ընդգրծվում ե խորհրդային իշխանության հիմնական ինդիրը «քաղաքացին ու գյուղական պրոլետարիատի և չքավոր գյուղացիության դիկտատորության սահմանումը», աշխատավորների համար ապահովել իրենց կարծիքներն արտահայտելու իրական ազատություն և դրա համար բանվոր գասակարգի ու գյուղական չքավորության ձեռքը հանձնել մամուլի որդաններն ու տպարանները, աշխատավորության տրամադրության տակ դնել ժողովրդական ժողովներ կազմակերպելու պիտանի շենքերը և քանվորներին ու չքավորագույն գյուղացիներին ամեն կերպ ոժանդակություն ցույց տալ իրենց ազատ կազմակերպման գործում, ինչպես նաև ապահովել նրանց բազմակողմանի ձրի կրթությունը, ըստ վորի աշխատանքը հանրապետության բոլոր քաղաքացիների պարտականություն և ճանաչվում և ազդարարվում ե «չաշխատողը չի ուտի» լոգունգը։

Սրանք են 1918 թվականի խորհրդային սահմանա-

դրության հիմնական դրույթները, վորանց հիման վրա բանվոր դասակարգը կառուցեց իր նոր պետությունը, ապահովեց ժողովրդական տնտեսության վերելքը և մասսաների նյութական բարեկեցության ու աշխատավորության կուլտուրայի աճը: Խորհրդային սահմանադրության հիմունքներն այս բոլոր տարիների ընթացքում սոցիալիզմի հաղթանակի համար մզվող պայքարի դրու և յեղել: Յեղ վորքան խորհրդային սահմանադրության հիմունքներն ավելի եյին մարմնանում կյանքում, այնքան ավելի հաջող առաջ եր ընթանում առցիալիզմի գործը մեր յերկրում:

Ճիշտ կլինի ասել վոր ներկա մոմենտիս ել խորհրդային սահմանադրության հիմունքը կենսունակ եռ անսասան: Դրա հետ միասին մենք պետք ե խոստովանենք, վոր այդ սահմանադրության առանձին մասերը հնացել են, վորքան վոր սոցիալիստական շինարարությունը 1918 թվականից իվեր վիթխարի քայլ և արել գեպի առաջ: Զի կարելի չտեսնել վոր խորհրդային սահմանադրության բնագրում բոլորովին չեն արտացոլել և չեյին կարող արտացոլել յերկրի եկոնոմիկայում և սոցիալական կառուցվածքում այն վիթխարի փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել վերջին տարիների ընթացքում:

Համարյա տասը տարի յե անցել այն մոմենտից, յերբ մենք մուտքանք արդյունաբերության մինչպատերազմյան մակարդակին և յերբ կուսակցության XIV համագումարը և, ամենից առաջ, ընկեր Ստալինն ամբողջ հասակով առաջադրեց յերկրի սոցիալիստական ինդուստրացման խնդիրը: Հաջողությամբ իրագործելով այդ խնդիրը, մենք ստեղծեցինք նոր, տեխնիկակիս առաջավոր սոցիալիստական ինդուստրիա,

այնպիսի բարձրության վրա գրեցինք սոցիալիզմի հիմքը հանդիսացող մեր ծանը արդյունաբերությունը, վոր այժմ մենք ի վիճակի յենք սեփական ուժերով միքանի տարում ավարտելու ժողովրդական վողջ տնտեսության տեխնիկական վերակառուցումը: Դրան ապացուց ե այն, ինչ վոր մենք այստեղ լսեցինք ընկը Որջոնիկիձեյի զեկուցման մեջ ծանը արդյունաբերության հաջողությունների մասին, նրա ներկայիս վիթխարի հնարավորությունների մասին, նրա նոր խընդիրների մասին:

Մեր գյուղի վիթխարի հետամնացության հետևանաքով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրն ամենադժվարին խնդիրն եր խորհրդային իշխանության համար: Սակայն այժմ հիմնականում լուծված և և այդ խնդիրը, կուլակությունը ջախջախված ե: Կոլտնտեսությունները հաղթել են ամբողջ ճակատով: Ստեղծված ե խորհրդանտեսությունների լայն ցանց: Գյուղը վերակառուցվում և կողեկատիվիզմի և նոր տեխնիկայի հիմունքների վրա, յերկրորդական տեղ վանելով անհատական գյուղացիական տնտեսությունը:

Յերբ խորհրդային պետության հիմնադրին լենինի կողմից գրվում եր մեր սահմանադրությունը, Հոկտեմբերյան հեղափոխության կողմից աղդայնացված հողն արդեն անցել եր պետությանը: Այդ ժամանակ պետության տրամադրության տակ եյին անցել նաև բանկերն ու տրանսպորտի կարեռագույն տեսակները, նմանապիս նաև արդյունաբերական ձեռնարկությունների հանքային սեփականության անցնելու սկիզբն եր դրված: Սակայն գեռնս յերկար տարիների ընթաց-

քում ազգայնացված հողը գտնվում եր առանձին մասն
տնտեսատեր՝ դյուղացիների տրամադրության տակ, վո-
րոնք ընդհուպ մինչև վերջին ժամանակաշրջանը չեյին
ցանկանում բաժանվել մասնավոր-սեփականատիրական
տնտեսությունից: Այսպես կոչված բանվորական հսկո-
ղությունը Փարբեկների ու գործարանների վրա այն
ժամանակ նախապատրաստում եր արդյունաբերական
ձեռնարկությունների բունագրավումը և անցումը պե-
տության ձեռքը: Սակայն այդ անցումն իրագործվեց
միայն քիչ ավելի ուշ: Առևտուրը, բացառությամբ
փոքր մասի, դեռևս մասնավոր ձեռքերում եր գըտ-
նվում:

Ներկա մոմենտին հանրային սեփականության ըս-
կզբունքները հաղթել են ժողովրդական տնտեսության
բոլոր ճյուղերում՝ թե քաղաքում և թե գյուղում: Ար-
դյունաբերությունն ու արանսպորտը փոքր բացառու-
թյամբ պետության տրամադրության տակ են գրտ-
նվում: Գյուղատնտեսությունն ինը տասերորդով ընդ-
դրկված ե կոլտնտեսությունների և խորհանտեսու-
թյունների կողմից: Վարկն ու բանկերը խորհրդային
իշխանության ձեռքին են: Ապրանքաշրջանառությունը
հպատակեցված է պետությանը և սոցիալիստական կոոպե-
րացիային: Վերջին յերկույթերնք տարվա ընթացքում
սոցիալիստական սեփականությունը խորհրդային հա-
սարակության հիմեն ե դարձել:

Այդ յերկում ե և հետևյալ թվերից, վորոնք վերա-
բերում են արտադրական հիմնական ֆոնդերին, այ-
սինքն մեր յերկում յեղած սեփականության տարբեր
տեսակներին.—

Արտադրական հիմնական ժողովերն ըստ սոցիալիստական սեկտորների

(Միջին տարեկան ժամկերը, 1933 թվի անփոփոխ գներով)

| | 1925 թ. | 1934 թ. | | |
|--------------------------------|-------------------------|-----------------|-------------------------|-----------------|
| | Միլիոն սուբյեկտներով | Գումար ըլլ % | Միլիոն սուբյեկտներով | Գումար ըլլ % |
| Սոցիալիստական տնտեսությունը... | 22,678 | 48,8 | 90,344 | 95,81 |
| Կապիտալիստական սեկտորը ... | 3,037 | 6,5 | 83 | 0,09 |
| Մասնավոր մանր տնտեսությունը... | 20,790 | 44,7 | 3,867 | 4,10 |
| Հնդկամենը ... | 46,505 | 100,0 | 94,294 | 100,0 |

Իննը տարվա ընթացքում՝ 1925 թվից մինչև 1934 թ.
ժողովրդական վողջ տնտեսության արտադրական հիմ-
նական ֆոնդերը մեղանում 46,5 միլիարդ ռուբլուց աճե-
ցին մինչև 94,3 միլիարդ ռուբլու, այսինքն կրկնա-
պատիկ ավելացան:

Սակայն կարենը միայն այդ չե-
զհանական նշանակություն ունի այն, թե ինչպես
և փոխվել սոցիալիստական սեփականության (սոցիա-
լիստական արտադրական ֆոնդերի) և մասնավոր-սե-
փականատիրական տնտեսության (նրա արտադրական
ֆոնդերի) միջև յեղած փոխհարաբերությունը: Տասը
տարի սրանից առաջ ժողովրդական տնտեսության մեջ
կապիտալիստական տարբերը դեռ նկատելի դեր ելին
խաղում և կազմում ելին ամրոջ յերկրի արտադրական
ֆոնդերի 6,5%: Մասն վոչ-կապիտալիստական տնտե-
սության հետ միասին արտադրության միջոցների
մասնավոր սեփականությունն այն ժամանակ կազ-

մում եր Խորհրդային Միության արտադրական բուրք ֆոնդերի կեսից ավելին:

1935 թվականին գրությունը միանգամայն փոխվեց: Կապիտալիստական տարերից արդեն վոչինչ չմնաց: Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը պահպանվեց մեր յերկրի արտադրության միջոցների ամրող գումարի 4% ի սահմաններում միայն: Արտադրության միջոցների (արտադրական ֆոնդերի) 96% ն արդեն պատկանում է պետությանը, կոլտնտեսություններին և կոստիրացիային: Այնինչ պետությունն ու կոլտնտեսությունները վիթխարի նոր շինարարություն են կատարում, վորի մասշտաբն աճում ե տարեցտարի:

Սոցիալիստական սեփականությունն աճում է մեր աչքերի առաջ հանձին պետական նոր գործարանների ու ֆաբրիկների, եկամուտակայանների և յերկաթուղիների, հանձին խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների՝ իրենց նորանոր շինարարություններով և մեքենաներով, իրենց նորանոր անասնաբուժական ֆերմաներով: Աճում են նոր քաղաքներ, կուլտուրական հիմնարկներ և բնակելի տներ: Արդեն փորձարկված ե, և ըստ վորում լավ արդյունքներով, և Խորհրդային Միության հանրային սեփականության գործող ֆոնդերի մեջ և մուծվում սոցիալիստական կառուցման նոր գիգանտներից մեկը — Մոսկվայի մետրոն: (Ծափեր): Յեվ այսոր խորհրդային մայրաքաղաքի այդ նոր խոշոր նվաճման համար արդեն կարող ենք շնորհավորել վոչ միայն Մոսկվայի ընկերներին, այլև Խորհրդային Միության բոլոր աշխատավորներին: (Բուռն Ծափեր):

Մեր յերկիրն իր սոցիալ-տնտեսական հիմքում ար-

մատապես վերակառուցվել ե, վերափոխվելով սոցիալիստական յերկրի: Դրա համար միայն հնարավոր դարձավ 1932 թվին հրատարակել այն հայտնի որենքը, վորն ազգարարում ե, թե «հանրային սեփականությունը (պետական, կոլտնտեսային, կոռպերատիվ) խորհրդային կարգի հիմքն է հանդիսանում, նա սրբազն ե ու անձեռնմխելի, և հանրային սեփականության նկատմամբ վոտնձգություն կատարող մարդիկ պետք ե գիտվեն վորպես ժողովրդի թշնամիներ»: Սրան կարելի յե ավելացնել միայն այն, վոր մեր յերկրի պրոլետարական և կոլտնտեսային բնակչությունն արդեն 1934 թվի սկզբին կազմում եր ավելի քան 124 միլիոն հոգի, իսկ այժմ նա ել ավելի յե աճել:

Խորհրդային հասարակակարգում տեղի ունեցած այս արմատական փոփոխությունները խորհրդային սահմանադրությունը դեռ չի արտացոլել: Մինչդեռ ըստ Ֆերդինանդ Լասալի գիտուկ արտահայտության սահմանադրությունը, վորպես յերկրի հիմնական որենքը, պետք ե «գործուն ույժ լինի, վորն անհրաժեշտ ձևով կերտում և մնացած բոլոր որենքներն ու իրավական հիմնարկները» (Ֆ. Լասալ, սահմանադրության եյությունը): Դրանից հետում ե, վոր յերբ սահմանադրությունը ճիշտ ե արտահայտում դասակարգային ուժերի փոխհարաբերությունը յերկրում, — այն ժամանակ նա հասարակակարգի ամրապնդման հոր զենք ե հանդիսանում:

Հատկապես դրա համար մեր սահմանադրությունը պետք ե համապատասխանեցվի դասակարգային ուժերի ներկայիս փոխհարաբերությանը, և ամենից առաջ, հանրային սոցիալիստական սեփականության սկզբունք-

Ների լիակատար հաղթանակին մեր Միության մեջ,—
և այն ժամանակ խորհրդային սահմանադրությունն
ել ավելի մեծ չափով կդառնա այն ցործուն ուժը,
վորն անհրաժեշտ ճեղք կերտում ե բոլոր մնացած ո-
րենքներն ու իրավական հիմնարկները», վորոնք ան-
հրաժեշտ են սոցիալիզմի շինարարության հաջողու-
թյան համար:

Հանրային սեփականությունը հաղթություն տա-
րավ մեր յերկրում դասակարգային թշնամի ուժերի
դեմ մղվող կատաղի պայքարում: Կապիտալիստական
տարրերի վերացումը — դժվարագույն խնդիր եր, վորի
ավարտմանը մենք հասանք միայն վերջին ժամանա-
կաշրջանում: Կապիտալիզմի մնացորդները դեռևս մնա-
ցել են յերկրի եկոնոմիկայում, մասնավոր մանր տըն-
տեսության բեկորներում: Կապիտալիզմի մնացորդներն
ուժին են և մարդկանց գիտակցության մեջ, նույնիսկ
բանվորների և առավել ևս կոլտնտեսականների գի-
տակցության մեջ, չսոսելով արդեն այն մասին, վօր
գյուղական ընակչության մոտ 35 միլիոնը դեռևս չի
բաժանվել իր մանր-սեփականատիրական տնտեսու-
թյունից: Յեթե իր ժամանակին լենինը խարազանում
եր բանվորների վորոշ խմբերի ու շերտերի մոտ կա-
պիտալիզմից մնացած տրադիցիաները (սովորույթ-
ները), վորն իր արտահայտությունը գտնում եր այն
բանում, թե «տալ «նրան» (պետությանը) ավելի քիչ
ու ավելի վատ աշխատանք, պոկել «նրանից» ավե-
լի շատ փող», — ապա այժմ ել դեռևս անհրաժեշտ և
ամենորյա և համառ պայքարը մղել կապիտալիզմի այդ
տեսակի մնացորդների դեմ բանվորների առանձին
խմբերում և, ել ավելի կոլտնտեսականների առան-
ձին շերտերում:

Այն ժամանակվանից, յերբ հանրային սեփակա-
նությունը Խորհրդային Միության մեջ սեփականու-
թյան գլխավոր ձեն և գարձել իսկ հետեւարար ընակ-
չության ձնշող մասն այժմ կապված և հանրային
(պետական, կոլտնտեսային, կոռպերատիվ) տնտեսու-
թյան հետ, այդ ժամանակվանից մեզ համար ել ավելի
մեծ նշանակություն և ստացել հանրային սեփակա-
նության պահպանման ու ամրապնդման խնդիրը,
նշանակում և նաև մարդկանց գիտակցության մեջ կա-
պիտալիզմի հականաւարակական, հակապետական,
հակակոլտնտեսային մնացորդների դեմ պայքարելու
խնդիրը: Պետությանը և կոլտնտեսություններին պատ-
կանող հասարակական վիթխարի արտադրական ֆոն-
դերի մասին վերև բերված թվերը վկայում են այն
մասին, թե մեզ համար ի՞նչ վիթխարի նշանակու-
թյուն ունի հանրային սեփականությունը պահպանե-
լու ու ամրապնդելու խնդիրը և այդ սեփականությունն
աշխատավորության ոգտին ձիւտ ոգտագործելու խնդիրը: Մենք պետք ե անպայման համանենք այն բա-
նին, վոր Փաբրիկում ու գործարանում, դպրոցում ու
հիմնարկում խնայողաբար վերաբերվեն պետական
սեփականության և ընդհանուր իրական հոգացողու-
թյուն ստեղծվի նրա ամրապնդման համար: Կոլտնտե-
սությունում և կոռպերացիայում, հանրային դաշտե-
րում և հանրային խանությում տարվող՝ աշխատան-
քում մենք պետք ե ապահովենք հանրային բարիքի
ամեն կերպ պահպանումը և ընդհանուր գործարար
հոգացողությունը հանրային տնտեսության աճման
մասին: Այն ժամանակ մենք լավ և ավելի կուտու-
րականորեն աշխատանքում է հանրային բոլոր կոլ-
տնտեսականները, բոլոր աշխատավորները: Այն ժա-



մանակ մեր գործերն ել ավելի արագ կը արդավաշացնես:

Ահա թե ի՞նչու անհրաժեշտ և մատնանշված փոփոխությունները մտցնել խորհրդային սահմանադրության մեջ, այն համապատասխան դարձնելով դաստկարգային ռեժիսորի ներկայիս փոխհարաբերության հետ Խորհրդային Միության մեջ։ Մեզ համար խորհրդային սահմանադրությունը հասարակ դեկարացիա չե, այլ սոցիալիստական սեփականության հետագա ամրապնդման, սոցիալիստական հասարակության վերջնական հաղթանակի համար մղվող պայքարի կարևորագույն փաստաթուղթ։ (Ծափեր)։

Այդ ե մեր առաջին ինդիրը խորհրդային սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու ժամանակ։





II. ԽՈՐՀԴԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ
ՀԵՏԱԳԱ ԴԵՄՈԿՐԱՑԻԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակը հնարավոր
դարձավ շնորհիվ այն բանի, վոր վոչ միայն բանվոր
դասակարգը, այլև գյուղացության հիմնական մասսան
հանրային (սոցիալիստական) սեփականության կողմը
կանգնեց:

Ինարկե խորհրդային վողջ իրավակարգը գյուղացի-
ներին օժանդակել և նոր ուղու ընտրության մեջ, և
խորհուրդները ներքեցից վերև ակտիվորեն նրանց ող-
նել են վողջ կոլտնտեսային շինարարության մեջ։ Սա-
կյան այնուամենայնիվ անհրաժեշտ յեղավ խորհրդա-
յին իշխանության 12 տարի, վորպեսզի գյուղացիական
մասսաները համոզվեյին իրենց տնտեսության սո-
ցիալիստական վերակառուցման անհրաժեշտության
մեջև իրենք վերջնականապես ընտրելուն գյուղի զար-
գացման կոլտնտեսային ուղին։

Խորհրդային դեմոկրատիզմն ապահովեց գյուղացի-
ների մասնակցությունը՝ բանվոր դասակարգի ղեկավա-
րությամբ՝ նոր պետության կառավարման ամբողջ
գործում, այդ թվում նաև նրանց մասնակցությունը
ազգայնացված խոշոր արդյունաբերության կառավար-
ման մեջ, գյուղի լայն մասսաներին ցույց տալով սոցիա-
լիստական տնտեսության վիթխարի առավելություն-
ները։ Պրոլետարիական դիկտատուրան օժանդակեց գյու-
ղացիներին նաև կոռպերատիվ շինարարության մեջ
լայնորեն ներգրավելուն և դրա հետ միասին շատ բա-
նով արագացրեց գյուղացիական մասսաների քաղա-
քական գիտակցության և կուլտուրականության աճու-
մը։ Այս բոլորը միասին վերցրած նախապատրաստեց

կողմանտեսային կարգի հաղթանակը զյուղում և այժմ հնարավորություն և տալիս գներու խորհրդային դեմոկրատիզմի հետագա զարգացման հարցը մեր յերկրություն

Խորհրդային իշխանության մեջ, — ասում ե մեր կուսակցության ծրագիրը, — իր արտայայտությունն ե գտել դեմոկրատիզմի բարձրագույն տիպը, պըռետարական դեմոկրատիզմը, գեմոկրատիզմն աշխատավորության համար։ Այդ դեմոկրատիզմն արմատապես տարբերվում է բուրժուական դեմոկրատիզմից, վորն իր բոլոր այլաձևություններով սոսկ հսկայական մեծամասնության նկատմամբ, բուրժուագիքայի դիկտատուրայի, աշխատավոր մասսաների նկատմամբ մի բուռն կապիտալիստների դիկտատուրայի քողարկումն և հանդիսանում։

Լենինն այսպես եր ասում բուրժուական դեմոկրատիայի և խորհրդային իշխանության միջև յեղած տարբերության մասին։

«Հին, այսինքն բուրժուական դեմոկրատիան և պառլամենտարիզմը կազմակերպված եյին այնպես, վոր հատկապես աշխատավորական մասսաներն ամենից ավելի եյին ոտարացված կառավարման ապարատից։ Խորհրդային իշխանությունը, այսինքն պըռետարիատի դիտառուրան, ընդհակառակը, այնպես և կառուցված, վորպեսզի աշխատավորական մասսաներին մերձեցնի կառավարման ապարատին» (Լենին, հ. XXIV, եջ 14):

Ընկեր Ստալինը «Լենինիզմի հիմունքներում» այնել ե բուրժուական ու պըռետարական դեմոկրատիայի միջև յեղած տարբերության հետեւյալ բնորաշումը։

«Դեմոկրատիան կապիտալիզմի որոք կապիտալիստական դեմոկրատիա յե, շահագործող փոքրամասնության դեմոկրատիայի մեջ, դաստիարակել նրանց ինքնուրույն քաղաքական կյանքի մեջ, դաստիարակել նրանց քա-

թյան դեմոկրատիա, վոր հենվում ե շահագործվող մեծամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված ե այդ մեծամասնության դեմ։ Միայն պրոլետարական դիկտատուրայի որոք հնարավոր են իսկական «ազատություններ» շահագործվողների համար և պրոլետարների ու զյուղացիների իսկական մասնակցություն յերկրի կառավարման գործում։ Դեմոկրատիան պըռետարիատի դիկտատուրայի որոք պրոլետարական դեմոկրատիա յե, շահագործվող մեծամասնության դեմոկրատիա, վոր հենվում ե շահագործող փոքրամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված ե այդ փոքրամասնության դեմ։

Բնութագրելով մեր խորհրդային սիստմի դեմոկրատիզմը, լենինը մատնանշշում եր նրա հետեւյալ հիմնական գծերը։

«Խորհրդային դեմոկրատիզմի, — այսինքն պրոլետարիատն, նրա կոնկրետ, տվյալ կիրառմամբ, — սոցիալիստական բնություննախ և առաջ այն ե, վոր ընտրովներն իրենք աշխատավոր ու շահագործվող մասսաներն են, բուրժուազիան բացասվում ե. յերկրորդ, այն ե, վոր ընտրությունների ամեն տեսակի բյուրոկրատական ձևականությունները և սահմանափակումները վերանում են, մասսաներն իրենք են վորոշում ընտրությունների կարգը և ժամկետները, ընտրվածներին հետ կանչելու լիակատար աղատությամբ։ յերրորդ, վոր ստեղծվում ե, աշխատավորների ավանդաբարի, խույը արդյունաբերական պըռետարիատի լավագույն մասսայական կազմակերպություն, վոր թույլ ե տալիս նրան դեկալարել շահագործվողների առավելացույն լայն մասսաներին, ներգրավել նրանց ինքնուրույն քաղաքական կյանքի մեջ, դաստիարակել նրանց քա-

զաքականապես իրենց սեփական փորձով, վոր այդպիսով առաջին անգամ ձեռնարկվում ե այն բանին, վորպեսզի բնակչությունն իսկապես գլխովին սովորի կառավարել և սկսի կառավարել» (Լենին, հ. XXII, եջ 606—607, հայերատ):

«Պրոլետարական հեղափոխությունը և ունեպատկառություն» հայտնի բրոյցուրում կենինը սուր կերպով ընդգծել ե այն, ինչը նա բազմիցս մատնանշել ե.—

«Պրոլետարական դեմոկրատիան միջոն անգամ ավելի դեմոկրատական ե ամեն մի բուրժուական դեմոկրատիայից: Խորհրդային իշխանությունը միջինավոր անգամ ավելի դեմոկրատական ե ամենադեմոկրատական բուրժուական հանրապետությունից» (Լենին, հ. XXIII, եջ 350):

Խորհրդային սիստեմի այդ դեմոկրատիզմի շնորհիվ միայն մեր կուսակցությանը հաջողվեց սոցիալիստական շինարարության գործի մեջ ներդրավել միջինավոր բանվորների և տասնյակ միջինավոր գյուղացիների: Իր հերթին սոցիալիզմի շինարարության հաջողությունները մեզ այժմ հնարավորություն են տասիս գներու խորհրդային դեմոկրատիզմի հետագա զարգացման, սոցիալիստական դեմոկրատիան մինչև վերջը հասցնելու հարցը:

Այն ժամանակ, յերբ Խորհրդային Միության մեջ այժմ դրված ե ընտրական սիստեմի հետագա դեմոկրատացման հարցը,—վոչ լիովին հավասար ընտրությունները հավասարով, բազմաստիճանն ուղղակիով, բացը փակով փոխարինելու իմաստով, —բուրժուական բոլոր պետություններում պետական սիստեմի զարգացումը մենք տեսնում ենք հակառակ ուղղությամբ՝ դեմոկրատիայի բացասաման և Փաշիզմին անցնելու ուղղությամբ:

Ո՞ինչև վերջին ժամանակներս վոչ վոքի համար գաղտնիք չեր, վոր կապիտալիստները կարողանում ենին ապահովել իրենց տիրապետությունն աշխատավորական մասսաների վրա բուրժուական դեմոկրատիայի ամեն մի սիստեմի ժամանակ, ամեն մի պառլամենտի և ընտրական իրավունքների ժամանակ: Բուրժուական յուրաքանչյուր պետության մեջ այսպես կոչված «հասրական կարծիքի» վրա իշխում ե կապիտալիստական մամուլը, վորին ոգնում են վոչ միայն պետական վողջ ապարատն ու վոստիկանությունը, այլև տերտերների, բուրժուական գրականագետների, պրոֆեսորների և արվեստի գործիչների մի ամբողջ բանակ: Մեծ յերկիրներում կապիտալիստական հզոր տրեստներն իրենց տրամադրության տակ ունեն հարյուրավոր թերթեր և բազմահազար լրագրողներ ու ժուրնալիստներ: Ժողովատները, չխոսելով արդին յեկեղեցիների մասին, գտնվում են տիրապետող դասակարգերի ձեռքին, այն ժամանակ յերբ բանվորական և դեմոկրատական վողջ մամուլն ապրում ե վոստիկանական կրունկի տակ և յենթարկվում ե վոստիկանական անհամար բռնությունների: Ամեն մի բուրժուական պետության մեջ յերկրում և պառլամենտում տիրող կուսակցությունները հանդիսանում են կապիտալիստների և կավլածատերերի կուսակցություններ: Ինչպես տեսնում եք, մինչև մոտիկ ժամանակներս կապիտալիստները հարմար կերպով սարքում ենին բուրժուական դեմոկրատիայի և պառլամենտարիզմի ամեն մի սիստեմի ժամանակ...»

Սակայն վորոշ ժամանակիցիվեր դրությունը փոխվել ե: Ժողովրդական ներքենում յեղած անբավականությունը վախեցնել սկսեց բուրժուական տիրող դասակարգերին: Բուրժուազիան սկսեց կառավարման իր սիստեմից դուրս քշել բուրժուական դեմոկրատիայի և պառ-

լամենտարիզմի մնացորդները: Վոչ միայն կոմկուսակցությունները, այլև սոցիալ-դեմոկրատիայի կուսակցությունները, վորի առաջնորդները միշտ պատրաստակամություն են ցուցաբերել հարմարվելու բուրժուական իրավակարգին, զբկվում են գոյուրյան լեզվաւրբյունից: Լեզվալությունից զրկվում են նաև բանվորական բոլոր մյուս կաղմակերպությունները: Պետության ֆաշիստական վերակառուցումն այժմ լիակատար թափով ծավալվում ե մի շարք յերկրներում: Ճիշտ ե, պառամենտաները դեռևս գույություն ունեն, համենայն դեպս պետական հիմնարկների ցուցակում ե՝ Խտալիայում, և՝ Գերմանիայում, սակայն զործնականում նրանց այլևս լուրջ հաշվի չեն առնում: Պառամենտում ներկայացուցության գործն այնքան ե հասարակ բան դարձել, վոր Գերմանիայում, 1934 թ. հունվարի 30-ի գեղքերից հետո, ուստի սայխստագի սպանված պատգամավորների փոխարեն ուսյիստագի նացիոնալ-սոցիալիստական ֆրակցիայի նախագահի պարզ ցուցումով նշանակվեցին նոր պատգամավորներ: Այժմ արդեն հազվադեպ չե, վոր կառավարությանն իրավունք ե տրվում որենքներ կրատարակելու ինչպես սահմանադրության կարգով, այնպես ել «կայսերական սահմանադրության նախատեսած պրոցեդուրայից գուրք» (Գերմանիա, 1933 թ որենքը): Ժողովրդի առաջ ունեցած պատասխանատվության սկզբունքը փոխարինվում ե բուրժուալիայի համար ավելի հարմար պատասխանատվության սկզբունքով միայն. . . . Հաստծո և պատմության առաջ» (լեհական 1934 թ. սահմանադրության յերկրորդ պարագրաֆը):

Կապիտալիզմի բոլոր յերկրներում բուրժուական վորմերի դեմոկրատիայի զարգացումն ընթանում է դեպի կապիտալիստների վերնաշերտի կողմից բացա-

հայտ ու անսահմանափակ բոռությունը: Պետական ապարատը ներաճում ե պարոնայք կապիտալիստների տիրապետող կաղմակերպությունների հետ, և դեմոկրատիայի թղենու տերեւները մի կողմ են շպրտվում: Այդ տեղի յեւ ունենում կապիտալիզմի յերկրներում ներքին քաղաքական դրության սրման հետևանքով և ամենեին ել բուրժուական կարգի ամրության մասին չե, վոր վկայում ե: Դեռ վոչ մի յերկիր չի ապացուցել, վոր մասսաների նկատմամբ ուղղակի բռնության միջոցով կառավարման ֆաշիստական սիստեմին անցնելով վկայում ե բուրժուական պետության ամրապնդման մասին և նրա համար ապագայի նկատմամբ լավագույն հեռանկարներ ապահովելու հնարավորության մասին: Վոչ, այդ չի կարելի ապացուցել, քանի վոր կառավարման տեռորիստական մեթոդները վկայում են աշխատավոր մասսաների հետ պետական ապարատի վերջնական խզման մասին, բուրժուական պետության դատապարտվածության մասին միայն:

Խորհրդային պետության մեջ զարգացումը միանգառայն այլ, ուղղակի հակադիր գծով ե ընթանում, — վոչ թե դեպի դեմոկրատիզմի սեղմումը, այլ դեպի պրոլետարական դեմոկրատիայի առավելագույնու հանրակողմանի զարգացումը: Խորհրդային իշխանությունը և մեր կուսակցությունն իրենց համար խնդիր են գրենում ծավալել խորհրդային դեմոկրատիզմը և, հետևաբար, ամեն կերպ պետական կառավարման ամբողջ գործում ներգրավել բանվորներին ու գյուղացիներին:

Բանվորա-գյուղացիական պետության զարգացման կենդանի փաստերը ցույց են տալիս, թե ինչպես և աճում աշխատավորների գեմոկրատիզմը մեր յերկրում: Այդ աճն արտահայտվում է մասսաների սոցիալիստա-

կան շինարարությանը մասնակցելու տարբեր ձևերում: Դա իր արտահայտությունն ե գտնում բանվորների և դյուլազիների ավելի աճող մասնակցությամբ խորհուրդների աշխատանքներում, ինչպես նաև խորհուրդների բուն իսկ ընտրություններում:

Թվերը ցույց են տալիս, թե ինչպես և աճել խորհուրդներում ընտրողների թիվը վերջին տարիների ընթացքում և ինչպես, դրա հետ մեկտեղ, տարեցտարի ավելացել ե ընտրողների ներկայությունն ընտրություններին: Այդ թվերն իրենք են խոսում իրենց մասին:

Խաղաղ շինարարության անցնելու առաջին տարիներին, 1922—1923 թ. թ. ընտրություններին ներկա լինելը խորհուրդներում սովորաբար ընտրողների 40% -ին չեր հասնում, իսկ գյուղական վայրերում նա հաճախ գյուղական ընտրողների ընդհանուր քանակի 20—25% -ի մոտն եր լինում: Հետո դրությունը տարեցտարի սկսեց լավանալ:

Ընտրությի թվի յել խորհուրդներում ընթրույթային Ծովայտնալու անդ ԽՍՀ Միավորան մեջ
(միլիոն եռորդ)

| Տարիներ | Ընտրական ներկայացել են հրավանք ունեին | Ընտրություններին ընտրություն- ներին | Ընտրության % |
|---------|---|---|-----------------|
| 1926 | 76 | 39 | 51 |
| 1927 | 78 | 39 | 50 |
| 1929 | 81 | 52 | 64 |
| 1931 | 86 | 62 | 72 |
| 1934 | 91 | 77 | 85 |

Դեռ 1926 և 1927 թվերին ընտրություններին ներկա յեր լինում բոլոր ընտրողների հազիվ միայն կեսը, իսկ

վերջին ընտրական կամպանիային (1934 թ.) ներկայությունը հասավ ընտրողների 85% -ին: Ընտրողների ներկայությունը քաղաքներում, վորպես կանոն, բարձր ե, քան գյուղում, բայց յեթև 1934 թվին ընտրողների ներկայությունը քաղաքներում հասավ 92% -ի, ապա գյուղական վայրերում այն արդեն հասավ 83% -ի:

Զի կարելի չնշել խորհուրդների ընտրություններին կանանց մասնակցության աճի կարևորագույն նշանակությունը, վորը վողջ խորհրդային, սոցիալիստական շինարարության մեջ բազմամիլիոն նորանոր ուժեր ներգրավելու կարևորագույն ցուցանիշ ե հանդիսանում:

1926 թվի համեմատությամբ, յերբ կանանց ներկայությունն ընտրություններին կազմում եր ընդամենը 43%, իսկ գյուղական վայրերում՝ 28%, վերջին ընտրությունների ժամանակ կանանց ներկայությունն ընտրություններին բարձրացել ե քաղաքներում մինչև 90% -ի, իսկ գյուղական վայրերում՝ մինչև 80% -ի: Պետք ե նաև ասել, վոր քաղաքներում պրոֆմիության անդամ կանանց ներկայությունն ընտրություններին միևնույն մակարդակի (93%) վրա յե, ինչպես և պրոֆմիության անդամ տղամարդկանց ներկայությունը (93%): Վերջապես վերին աստիճանի ցուցադրական են ընտրություններին կանանց մասնակցության աճի թվերը Միշին Ասիայի հանրապետությունների գյուղական վայրերում. — Ուզբեկստանի հանրապետության մեջ այդ ներկայությունը 1926 թվականին 7,8% -ից անցյալ տարի բարձրացավ մինչև 72% -ի, թուրքմենստանի հանրապետության մեջ 1927 թվ. 2,5% -ից այդ ներկայությունն անցյալ տարի բարձրացավ մինչև 73% -ի, Տաջիկստանի հանրապետության մեջ այդ ներկայությունը 1929 թվի 22% -ից 1934 թվին բարձրացավ մինչև

67% -ի: Զեր խանգարի դրան հակառակելու այնպիսի փաստ, վոր դեռևս մինչև այժմ կանայք ընտրական իրավունքից միանգամայն զբկված են այնպիսի յերկիրներում, ինչպես Խոտալիան, Թրանսիան, Ճապոնիան, Փոքրթուղարքիան, Բելգիան, Հոլանդիան, Հարավ-Սլավիան, Հունաստանը, Բրազիլիան և Արգենտինան:

Խորհրդային սահմանադրությունն ապահովում է 18 տարեկան և բարձր հասակի բոլոր աշխատավորաների համար խորհուրդների ընտրություններին մասնակցելը և խորհուրդներում ընտրվելու իրավունքը: Վոչ մի սահմանափակում ազգային պատկանելիության կամ սեփի մոտ գոյություն չունի: Խորհրդային սահմանադրությունը միայլ սահմանափակումը սահմանում է շահագործող տարրերի համար և աշխատավորությանն ամենից ավելի թշնամի՝ հին կարգերի սպասարկուների համար (նախկին վոստիկաններ, ժանդարմներ, քահանաներ և այլն):

Բայց թե վորքան աննշան և ձայնագուրկների տուկուր, ցույց են տալիս խորհուրդների թեկուզ և վերջին ընտրությունները: 1934 թվին ընտրական իրավունքից զրկվածները յերկրի վողջ հասակագոր ընակչության 2,5% եին կազմում, վորը յերկու միլիոն հոգուց մի քիչ ավելի յեւ հակադրեցեք այդ թիվը խորհուրդների ընտրողների ընդհանուր թվի հետ, վորն անցյալ տարի կազմում եր 91 միլիոն հոգի:

Դրանից յերեսում ե, վոր խորհուրդների ընտրություններին այժմ մասնակցում ե վոչ միայն աշխատավորության ամբողջ մասսան, այլև այն քաղաքացիների վորոց մասը, վորոնք առաջ ընտրական իրավունք չունեյին: Դեռ 1931 թվին ԽՍՀՄ Կհնտրոնական Գործադրի Կոմիտեի վորոշմամբ սահմանվեց այն արտաքս-

ված կուլակների քաղաքացիական իրավունքների վերականգնման կարգը, վորոնք գործով ապացուցել են, վոր վերջ են տվել կոլտնտեսությունների և խորհային իշխանության դեմ մղած պայքարին և պարապում են աղնիվ աշխատանքով: Կենտգործկոմի հետագա վորոշումներով ավելի հեշտացվեցին հանրոգուտ աշխատանքով զբաղվող կուլակների զավակների և բուն կուլակների իրավունքների վերականգնման պայմանները, վորոնք ապացուցել են խորհրդային պետության աղնիվ աշխատավորներ դառնալու ցանկությունը:

Այս բոլորը ցույց ե տալիս, վոր Խորհրդային Միության մեջ բոլոր աղնիվ աշխատավորների համար բաց ե լիակարավունք կյանքի ուղին և վոր ձայնագուրկների շրջանակն ավելի ու ավելի կրծատվում է: Մենք ընթանում ենք գեպի խորհուրդների ընտրություններում յեղած ամեն տեսակի սահմանափակումների լիակատար վերացումը, սահմանափակումներ, վորոնք իր ժամանակին մտցվել են «վորպես պայքարի ժամանակավոր միջոցառումներ շահագործողների իրենց արտոնությունները պաշտպանելու կամ վերականգնելու վործերի ղեկ», —ինչպես ասում ե Համ կ(բ)կ ծրագիրը: Այդ փաստերով հաստատվում են Լենինի հաճախակի հայտարարաբություններն այն մասին, վոր մեղանում մուծած ընդհանուր ընտրական իրավունքի սահմանափակումները սասկ ժամանակավոր ընույթ ունեն:

Այս ժամանակ, յերբ բութմուտական նորանոր պետություններ վերացնում են ընակչության ընտրական իրավունքի մնացորդները, խորհրդային Միությունը միօքանիվ յեւ մոտենում ընդիանուր լետրական իրավունքի ամեն տեսակի սահմանափակումների լիակատար վերացմանը: (Բուռն յերկարան ծափեր):

Վորապես խորհրդային սիստեմի հետագա դեմոկրատացման անհետածգելի միջոցառություններ կուսակցության կենտրոնական կոմիտեն այս համագումարի առաջ եղում հետևյալ հարցերը:—

Առաջին, բազմասինան ընտրություններն ուղղակիով փոխարինելու մասին:

